



«Լույսի մոլորակ» ծնողի և մանկան փառատուն

Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում «Լույսի մոլորակ» ծնողի և մանկան փառատունը, որը տեղի կունենա 2019թ. սեպտեմբերի 28-ին Գյումրիում՝ «Իմ Զայլը» հիմնադրամի հովանու ներքո, Վորլդ Վիժն Հայաստանի և ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հետ համագործակցությամբ:

Երևանում /ավելի քան 10000 այցելու/ և Ստեփանակերտում /ավելի քան 3000 այցելու/ կայացած և իր ձևաչափի մեջ եզակի միջոցառումն այս անգամ կրթական տոն է պարզևելու Շիրակի մարզի ծնողներին և երեխաներին:

Ծրագիրը ներառում է բաց և անվճար դասախոսությունների շարք ծնողների համար, մանուկների և մայրիկների համար անվճար խորհրդատվություն մի շարք մասնագիտություններով /առավել մանրամասն ժամանակացույցը կտրամադրենք շուտով/: Բացի դրանից, ուշադրության կիզակետում են լինելու հաշմանդամություն ունեցող երեխաների ներառման խնդիրների բարձրաձայնումը, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության թեմաները:

Ժամանցային ծրագիրը ներառում է «Չեքիաթի ժամ» բաժինը, որի շրջանակներում հասարակության կողմից մեծ սեր վայելող գործիչները երեխաների համար կընթերցեն հեքիաթներ յուրատիպ գրադարանային միջավայրում: Երեխաների համար կանցկացվեն նկարչության, կավագործության, ռոբոտաշինության, զարմանահրաշ ֆիզիկայի և քիմիայի, պարի, ձեռքի աշխատանքների և այլ բաց դասեր, իսկ այլ հարթակում մանուկները կմասնակցեն մենթալ թվաբանության բաց դասերին, ինչպես նաև կդիտեն հայկական մուլտֆիլմեր և թատերական ներկայացում: Առողջ ապրելակերպի քարոզչության շրջանակներում ծնողները և փոքրիկները կմասնակցեն սպորտային բաց դասերի:

Հարգանքով՝
Մարիաննա Գալստյան
Creo Project Solutions
տնօրեն